ՀՈՎՀ. ԾԻՐԱՔ

ԲԵՎԵՌԻ ԱՌՈՒՄԸ

ՀՈՎՀ. ՇԻՐԱՉ

ԲԵՎԵՌԻ ԱՌՈՒՄԸ

Շապիկի նկարը

Կ. Տիրատուրյանի

Ա 7/8539

ՊԵՏՀՐԱՏ
ՀԼԿՑԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ 1928

ՆԱԽ—ՅԵՐԳ

Ով սիրածի հետ ե հիմա,
Ով նայում ե լուսնի վրա,
Ով այգու մեջ ծառ ե տնկում,
Ով վոսկի յե հանում հանքում,
Ով գրում ե, կարդում ե գիրք,
Ով քաղում ե կանաչ ու միրգ,
Ով բամբակի արտն ե ջրում,
Ով վոչխարն ե պահում սարում,
Ով խոսում ե աստղերի հետ,
Ով անցնում ե ծովեր վեր-վեր,
Ով ջրերից ձուկ ե բռնում,—
Ցերբ վոր հոգնած տուն դառնում,
Թող գեթ մի պահ
Յերգս կարդա.—
Աշարհացունց թռչնի մասին,
Վաբի առջև մրրիկն ե սին...

1

Իմ հայրենիքն հնուց ուներ
Յեկրասասան դյուցազուններ,—
Ժողովրդի հողից ծնված,
Ու վագրենի կաթով սնված,
Վորոնք յելան ու մոլեգին
Աշխարհակալ այն գարշ մեկին
Արին փոշի իրենց վոտքին,
Ապա այն հին, սին աշխարհքի
Նենգ տերերին՝ մանր ու խոշոր
Ծվատեցին ահեղ մի որ՝
Հրդեհներով մոխրացրին...
—Ազատություն ու կյանք բերին
Ժողովրդի ու զորքի հետ՝
Բերին կյանքը այս ծաղկավետ,
Վոր շնչում ե ազատությամբ
Ու խնդումով ջինջ ու անամպ
Լցնում սիրտն աշխատողի,—
Գարուն պճնում կրծքին հողի։

2

Իմ հայրենիքն ահա կրկին
Դյուցազուններ ունի անգին՝
Յերկնասասան ու անվեհեր,
Վորոնք ունեն արծվի թևեր։—

Նրանք դեմքով առողջ վարդի
Զավակներն են ժողովրդի,
Վոր առյուծի նման ծնվել
Ու մայր հողի կաթով սնվել։
Թեվ են առել,
Արծիվ դառել։
Աչքերը լի արեվներով,
Հոգիները՝ յերազներով,
Սիրտը՝ սիրով առաջնորդի,
Վորը նրանց, վորպես արփի,
Կյանք է տալիս ու փայփայում,
Արեվ-աչքով խորքը նայում,
Սիրտ է տալիս ամեն մեկին,
Ուժ է բերում նոր աշխարհքին
Ու վողջ կյանքին,—
Վոր դյուցազներ ունի անգին...

3

Ցեվ դյուցազներն ահա սիրով
Պիտի թռչեն հուր թեվերով
Դեպի հյուսիս, անհայտ կողմեր,
Սուրան վորպես հզոր հողմեր,
Խորն հեռուներ յերազային,
Վոր ել, վաղուց նրանք կային,—
Բայց չեր տեսել աչքը մարդու
Ցեվ հեռատես և՛ կենսատու...

Ցեվ հերոսներն այն թեվավոր՝
Լցված սիրով յերկրիս հզոր՝
Նայեն չքնաղ հայրենիքին,
Ապա անձիր, մով յերկնքին,
Ու՝ վոդջերթի աղմուկն հնչեց,
—«Բարի ճամբա» աշխարհ կանչեց.
Ցելան՝ թռան...

4

Հե՛յ, կանգնեցե՛ք, հոդմեր վայրագ,
Ե՞յ, մրրիկներ,—
Դուք, ծովահեր,
Ծալեք ձեր խոլ թեվերն արագ,
Դյուցազները թռչում են վեր։
Անցնեն պիտի հրե հուլզով
Հավերժական ցուրտ հյուսիսով,
Վոր գագաթն ե հոդազնդի,—
Նրանք այնտեղ իջնեն պիտի,
Ուր չի դիպել ձեռքը մարդու՝
Ցեվ խանդավառ, և կենսատու։
Իջնեն պիտի նրանք այնտեղ,
Ուր չի շնչել դեռ վոչ մի ցեղ,
Ուր չի իջել դեռ վոչ մի թեվ,
Ուր չի հնչել մի խոսք թեթև,
Ուր լինել են ուզել սիրով՝
Լցված անձիր յերազներով՝

Քանի՞ սրտեր, վորոնց թաղել՝
Զլունն ե հավերժ անհայտ թողել...

5

Ահա և խուլ բեվեռը սառ,
Ե՞յ հեյ, հողմեր, առեք դաղար։
Բայց հողմերը չեն դաղարում՝
Արշավներ են ահեղ վարում,
Մերթ մառախուղն ականակիր
Լուռ ծածկում ե ծով ու յերկիր,
Մերթ ծանրացող գիշերվա պես
Թուխ ամպեր են գալիս հանդես,
Ու ցուրտն անգութ, ահեղ փչում
Տիեզերքն ե վողջ հառաչում,
Կարծես մահվան յերկունքն ե դա,
Վորի միջով մեր արևկա
Դյուցազներն են ահեղ թռչում
Յեվ արծիվներն են շառաչում
Հուր սրտերով, յերկաթաթև՝
Հեքիաթային ճախրով թեթև...

6

Հողմն ե գոռում սառն ու անգութ,
Ծանրանում են ամպերը մութ,
Փակում ճամբան տիեզերական,
Զարկում հանկարծ ահեղաձայն
Արծիվներին յերկաթաթև,

Վոր ամպերն են թողնում յետև,
Ցեվ սլանում խավարներով,
Նետերի պես ճեղքում սիրով
Հորձանքն ահեղ, սառն հողմերի,
Վոր տարերքն ե բյուր կողմերի...
Ու աներկյուղ մաքառումով
Ցերկնասասան, բոցեղ թափով
Հողագնդի գագաթն հասան,
Իջան զվարթ և ինչ տեսան՝
Միայն հավերժ ձյուն ու ձմեռ,
Մեռած մի ծով ու սառցալեռ։
Տիեզերքը մութ ու մթին,
Խոլ մառախուղ ու մահ չորս դին,
Անափ, անծեր,
Անհայտ ափեր.
Ցեվ ամենուր բուք ու բորան,
Արեվն հեռու՝ ասես մեռած,
Ցեվ մի հսկա սառցի վրա
Նրանք իսկույն զարկին վրան
Ու ներս մտան անմահ սիրով՝
Գիշերն ինչավ յերազներով։

7

Լույսը բացվեց յերկրի վրա,
Արեվ ծագեց վոսկեզրահ,
Արար-աշխարհ գործի յելան։
Առու, աղբյուր կցոլցոլան...

Բայց բեվեռում
Հողմն է գոռում,—
Շուրջն ամայի ափեր մեռած,
Սառցալեռներ, ծովեր սառած։
Ու հեռագիր յեկավ սիրով՝
—«Գրավված է բեվեռը ծով,
Մեծ ՍՏԱԼԻՆ, մեզ հետ ես միշտ,
Մենք հպարտ ենք, հավետ անվիշտ
Յեվ բեվեռի ցուրտ գագաթին
Զարկինք մեր ալ-դրոշն անգին,
Վոր փողփողա նա շարունակ՝
Աշխարհն առած իր շուքի տակ»։
Ու յերկրի հետ չքնաղ ու վեհ
Կարդաց, ժպտաց արեվի պես
Առաջնորդը մեր լուսախոհ,
Վորից անգամ արեվն է գոհ։

8

Համբավն հասավ ամենուրեք՝
Ծովերից ծով աշխարհ անցավ,
Թե մեր դրոշն ալ-վառ ու սեզ
Ցուրտ բեվեռից վեր խոյացավ։
Թե աշխարհի սառ գագաթին
Վոտքը դիպավ հզոր Մարդ ու։

*
* *

Իմ հայրենիքն ունի անգին
Դյուցազուններ, վորոնց կրծքին
Շքանշանն ե վառվռում
Ցեվ մեր դեմքին ժպիտ փռում։
Ցնծությունով յերկիր թնդաց,
Վարդեր իջան նրանց գլխին
Ցեվ ծաղիկներ՝ սիրով ցողված,
Ցեվ համբույրներ ջերմ ու անգին
Ցեվ յերգ հյուսվեց՝ համբույրներով,
Ցեվ կարոտից աստղերն իջան՝
Ցեվ յերկինքը ժպտաց խոնարհ
Դյուցազներին իր աստղերով....

ՎԵՐՋ—ՑԵՐԳ

Ցեվ աշխարհի վես գագաթին
Փողփողում ե դեռ կաթոգին
Կարմիր ու վառ մի դրոշակ՝
Վողջ հողագունդն իր շուքի տակ։

1937 թ.

Ա 8539

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳՐԱԴԱՐԱՆ

Գլխ. խմբագիր՝ Մկրտիչ Կոբյուն
Տեխ. խմբագիր՝ Ան. Գասպարյան
Սրբագրիչ՝ Վ. Ավագյան

Գլավլիտի լիազոր՝ Կ—4728. Հրատ. 4431
Պատվեր 71. Տիրաժ 3000·
Թուղթ. 72×105 Տպագր. 3/4 մամ.
Մեկ մամ. 16600 նիշ. Հեղինակային 0 2 մամ.
Հանձնված է արտադրության 17 հունվ. 38 թ·
Ստորագրված է տպագրության 11 փետր 38 թ·
Գինը 65 կոպ.

Գետհրատի I տպարան, Ծերևան, Լենինի 65

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0045681

[054]
ԳՐՍԵ 65 ԿՈՊ.
175
A I/8539

ОГАНЕС ШИРАЗ

ВЗЯТЬИЕ ПОЛЮСА

ГИЗ АРМ. ССР. ЕРЕВАН